«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 04-Ն ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«____ » _____ 2025 թ. N_____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 04-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33–րդ և 34-րդ հոդվածները

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանի հավելվածի.

1) «11. Բնակելի կառուցապատման գոտի. Կառուցապատման հարաչափեր» գլխի Աղյուսակ 8-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Հ/Հ	**Գոտիներ**	**Կառուցապատման խտության գործակից* $P_{կ1}$**	**Կառուցապ տոկոս $P_{կ2}$**
			%
1.	Բնակելի (սակավահարկ, մինչև 3 հարկով (ներառյալ)) բազմաբնակարան կառուցապատման թաղամասերում	0.8/1.2	40
2.	Բնակելի (միջին հարկայնությամբ, 4-8 հարկով) բազմահարկ բազմաբնակարան կառուցապատման թաղամասերում	0.8/1.2	40
3.	Բնակելի բազմահարկ (բարձր հարկայնությամբ՝ 9 և ավելի) բազմաբնակարան (այդ թվում բազմաֆունկցիոնալ) կառուցապատման վերակառուցվող թաղամասերում	1.6	60
4.	Բլոկացված բնակելի տներով (սակավահարկ, մինչև 3 հարկ), բնակարանամերձ հողամասերով կառուցապատման թաղամասերում	0.6	30
5.	Անհատական բնակելի տներով (սակավահարկ, մինչև 3 հարկ), տնամերձ հողամասերով կառուցապատման թաղամասերում	0.4	40
6.	Խառը կառուցապատման թաղամասերում	1.2	40
7.	Խառը կառուցապատման վերակառուցվող թաղամասերում	1.6	60
8.	Հասարակական բազմագործառույթ (բազմաֆունկցիոնալ) կառուցապատման	3.0	100
9.	Հասարակական մասնագիտացված կառուցապատման	2.4	80
10.	Կանաչապատ	-	7
11.	Սույն Աղյուսակի 2-րդ կետի մասով կառուցապատման խտության գործակիցը և կիրառվում են ինչպես ամբողջ միկրոշրջանի , այնպես էլ առանձին թաղամասերի		
12.	Սույն Աղյուսակի 3-րդ կետի մասով բնակելի բազմահարկ նոր կառուցվող և վերա		

թաղամասերի ստորգետնյա և նկուղային հարկերի կառուցապատման տոկոսը կ
հասցվել 80%-ի՝ բազմաբնակարան բնակելի շենքերի ստորգետնյա և նկուղային
ավտոկայանատեղիների քանակը նախատեսելու բնակարանների ընդհանուր քա
80% -100%-ի չափով, եթե վերգետնյա հատվածի կառուցապատման թույլատրել
դուրս գտնվող հատվածում ապահովվի առնվազն մեկ մետր բարձրությամբ հողա
տարածքի կանաչապատումը (որպես Կլիմայի փոփոխության հարմարվողական
մեղղման միջոցառում) կամ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թ
ապրիլի 4-ի N06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03.02-2022 նորմերի պահ
բավարարումն ապահովելու պայմանով (անհրաժեշտության դեպքում՝ որպես ե
գործառնական նշանակությամբ քաղաքացիական պաշտպանության պաշտպան
կառույց օգտագործելու, բնակչության պատսպարումն ապահովելու նպատակով

13. Սույն Աղյուսակի 4-րդ կետի մասով անջրանցիկ տարածքը (կառույցի մակերեսը չ
չպետք է գերազանցի 40%-ը։

14. Սույն Աղյուսակի 5-րդ կետի մասով սահմանված կառուցապատման տոկոսը ներ
հողամասի անջրանցիկ բոլոր տարածքները՝ ներառյալ տնտեսական և օժանդակ
կառույցների զբաղեցրած մակերեսը։

»:

2) 123-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Տնտեսական հարթակներից հեռավորությունը չի նորմավորվում, աղբակուտակման հարթակներից մինչև մարզահրապարակներ, մանկական խաղահրապարակներ և բնակչության հանգստի հարթակներ, ինչպես նաև նախադպրոցական, առողջապահական և սննդի կազմակերպություններ հեռավորությունն անհրաժեշտ է ընդունել ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 25-Ն հրամանով հաստատված պահանջներին համապատասխան: Հասարակական և խառը կառուցապատման գոտիներին կից տեղակայված արտադրական օբյեկտների հողամասերի սահմանից կողմնորոշիչ հեռավորությունը մինչև բնակելի և հասարակական շենքերը, ինչպես նաև հանրակրթական դպրոցների և նախադպրոցական, առողջապահական և հանգստի կազմակերպությունների հողամասերի սահմանները պետք է ընդունել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան, որոնք կարող են նվազեցվել նշված նորմերի 8-րդ հոդվածով սահմանված դեպքերում, այդ թվում՝ սանիտարապաշտպանական գոտու նվազագույն չափի սահմանման վերաբերյալ հաշվարկի հիման վրա:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: